

Ապօրինի ձերբակալություններ եւ խուզարկություններ՝ ՀՅԴ-ի անդամներու եւ մարզային կառույցներու նկատմամբ



ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմինի Հանրային կապերու գրասենեակը երէկ հաղորդեց, որ ապօրինի ձերբակալութիւններ եւ խուզարկութիւններ իրականացուած են ՀՅԴ մարզային կառույցներու պատասխանատու ընկերներու նկատմամբ:

«ՀՅԴ-ի անդամներու նկատմամբ քաղաքական հետապնդումներու այս նոր փուլը սկսած է Փաշինեանի՝ Թուրքիա կատարած այցելութեան զուգահեռ:

Ապօրինի... Ծար. կարդալ էջ 3

Հայաստանի մէջ խումբ մը անձեր, որոնց կարգին գործարար Սամուէլ Կարապետեան ձերբակալուեցան

Հայաստանի ներքին գործոց նախարարութիւնը տեղեկացուց ձերբակալման մասին խումբ մը անձերու, որոնց կարգին է գործարար եւ «Տաշիր Գրուպ» ձեռնարկութեան սեփականատէր Սամուէլ Կարապետեան:

Նշենք, որ շուրջ 45 անձեր ձերբակալուեցան Սամուէլ Կարապետեանի տան մօտէն, լրագրողներու հետ ունեցած զրոյցի մը ընթացքին յայտնեց Կարապետեանի եղբայրը՝ Նախկին պատգամաւոր Կարէն Կարապետեան, որ ըսաւ, թէ «յայտնի չէ, թէ ինչ հիմքով են բերման ենթարկուել այդ մարդիկ»:

«Հայ ժողովրդի սրբութիւնների համար պայքարելու եմ իմ ողջ ուժով, ուր էլ լինեմ, ինչ էլ որ լինի, թող չեմ տալու, որ որեւէ մէկը, իր որեւէ նպատակ հետապնդելով, յօշոտի մեր սրբութիւնները», յայտարարած էր Սամուէլ Կարապետեան: Յիշեցնենք, որ Կարապետեան ըսած էր, որ փոքրիկ խմբակ մը՝ մոռնալով Հայոց պատմութիւնը, հայ եկեղեցւոյ հազարաւոր տարիներու պատմութիւնը՝ յարձակում գործեց հայոց եկեղեցւոյ վրայ եւ հայ ժողովուրդին վրայ:

«Ես միշտ եղել եմ հայոց եկեղեցու կողքին ու հայ ժողովրդի կողքին: Եթէ քաղաքական գործիչներին չյաջողուի, ապա մենք մեր ձեռով ենք միջամտելու եկեղեցու դէմ արշաւին», յայտնած էր Կարապետեան:

Էջմիածինէն խստօրէն դատապարտեցին պատահածը: «Քիչ առաջ յայտնի դարձաւ, որ Հայոց եկեղեցուն աջակցութիւն յայտնելուց անմիջապէս յետոյ իրաւապահ մարմինների կողմից փորձ է կատարուել ձերբակալելու ազգային բարերար Սամուէլ Կարապետեանին, եւ այս պահին խուզարկուեմ է նրա տունը: Խստօրէն դատապարտում ենք ակնյայտ քաղաքական շարժառիթներով պայմանաւորուած հետապնդումը: Յորդորում ենք ՀՀ իշխանութիւններին անյապաղ դադարեցնել ապօրինի գործողութիւնները», կ'ըսուի էջմիածինի հրապարակած հաղորդագրութեան մէջ:

Մեծն Բրիտանիոյ 110 խորհրդարանականներ աջակցութիւն կը յայտնեն Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ Զուիցերիական Խաղաղութեան նախաձեռնութեան

ՀՅԴ Բիւրոյի Հայ Դատի Կեդրոնական խորհուրդը կը հաղորդէ, որ Մեծն Բրիտանիոյ խորհրդարանականները՝ ձիմ Շենըն եւ Լիվըրփուլի լորտ Ալթոն, անցեալ Ուրբաթ օր յայտարարութիւն տարածած են՝ հանդէս գալով Միջկրօնական եւ համոզմունքի ազատութեան հարցերով Խորհրդարանական միջկրօնական խմբակին անունով՝ արտայայտելով իրենց աջակցութիւնը Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ Զուիցերիոյ խաղաղութեան նախաձեռնութեան:

Աւելի քան 110 բրիտանացի խորհրդարանականներու անունով կատարուած յայտարարութեան մէջ կ'ողջունուի Զուիցերիոյ նախաձեռնութիւնը՝ ստեղծելու միջազգային խաղաղութեան հարթակ, որ կարելիութիւն կու տայ կառուցողական երկխօսութեան Ատրպէյճանի եւ Լեռնային Ղարաբաղի բռնազաղթի ենթարկուած հայկական բնակչութեան միջեւ:

Մեծն Բրիտանիոյ խորհրդարանականները շեշտած են հայ գաղթականներու վերադարձի իրաւունքի վերականգնման, մարդու հիմնական իրաւունքներու, որոնց շարքին կրօնի ազատութեան (ինչպէս սահմանուած է Մարդու իրաւունքներու համընդհանուր հռչակագրի 18-րդ յօդուածով) պաշտպանութեան, ինչպէս նաեւ հայկական մշակութային եւ հոգեւոր ժառանգութեան պահպանման կարեւորութիւնը:

«Լեռնային Ղարաբաղի մէջ բոլոր համայնքներու անվտանգութեան, արժանապատուութեան եւ կայունութեան վերականգնումը չափազանց կարեւոր է՝ ոչ միայն մարդասիրական նկատառումներէ մեկնելով, այլեւ շրջանի մը մէջ, որ հետզհետէ աւելի մեծցող աշխարհաքաղաքական եւ տնտեսական նշանակութիւն ունի», կը նշուի յայտարարութեան մէջ:

Զուիցերիական խաղաղութեան նախաձեռնութիւնը այս տարի պաշտօնապէս ընդունուած է Զուիցերիոյ խորհրդարանին կողմէ՝ պարտաւորեցնելով Զուիցերիոյ Դաշնային խորհուրդին մէկ տարուան ընթացքին հրաւիրել միջազգային խաղաղութեան համաժողով: Համաժողովի նպատակն է՝ միջազգային վերահսկողութեան ներքեւ կամ համապատասխան միջազգային դերակատարներու ներկայութեամբ կազմակերպել բանակցութիւններ՝ Լեռնային Ղարաբաղի պատմական բնակչութիւն կազմող հայերու անվտանգ եւ համախմբուած վերադարձի շուրջ:

Նախաձեռնութեան իրագործումը խթանելու նպատակով 26 Մայիս 2025-ին Պեռնի մէջ ստեղծուած է միջկրօնական խորհրդարանական յանձնախումբ՝ բաղկացած 19 զուիցերիացի երեսփոխանների: Այս մարմինը յանձնառու է աջակցիլ այն միջազգային գործիքակազմերուն, որոնք անհրաժեշտ են Զուիցերիոյ խորհրդարանի իրաւաբանական ուժ ունեցող որոշումի նպատակներուն իրագործման համար:

Մեծն Բրիտանիոյ այս յայտարարութիւնը կը լրացնէ Լեռնային Ղարաբաղի երկարատեւ տագնապին կայուն եւ ներառական լուծումներ գտնելու միջազգային կոչերուն աճող շարանը:

20 Յունիս, 2025թ



2025 MAZDA3 SPORT

CONTACT KEVORK ASADOURIAN,
GENERAL MANAGER, FOR ALL INQUIRIES.
KEVORK@GABRIEL.CA



ANJOU • PLATEAU • ST-JACQUES • ST-LAURENT



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղին աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիրի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Իսրայէլեան յարձակողականը աշխարհակարգի խորապատկերին մէջ

Պարզ է, որ Իսրայէլեան օգուժի ներկայ յարձակողականը Իրանի միջուկային կարողականութեան դիրքերէն ներս կը բացայայտէ նախագահ Թրամփի դիրքերու զգալի տկարացումը Թրամփ–Նեթանիահու առճակատման ընդհանուր պատկերին մէջ։ Թրամփ ցարդ կրցաւ Իսրայէլը հեռու պահել Իրանէն պնդելով, որ ինք կարողականու–թիւնը ունի (որպէս ղեկավար ուժի) Իրանը բերելու Արեւմտեան դաշտէն ներս շնորհիւ իր ուժային դիւանագիտութեան խաղաքարտերուն։ Եւ Իրան արդարացուց Թրամփի յոյսերը այս մարզին մէջ վարելով շատ նուրբ եւ դրական գիւսնագիտութիւն բանակ–ցութիւններու սեղանին վրայ։ Եւ սակայն բանակցային գործընթացը այնուամենայնիւ մտաւ փակուղի ինչո՞ւ։

Պատճառը պէտք է փնտռել Նեթանիահուի քաղաքականութեան էական առա–ջադրութիւններուն մէջ։ Գրած եմ բազմիցս, որ Թրամփ եւ Նեթանիահու կը գործեն հակադիր մեկնակէտերէ։ Անոնք համախոհներ չեն։ Անոնք տրամագծօրէն կը տարբերին իրարմէ իրենց անցեալի, ներկայի եւ ապագայի մտատեսիլներով։

Իրերու ներկայ դրութեան մէջ, կարեւոր է, որ հարցերը դրուին մերկապարանոց։ Յստակ է, որ Նեթանիահուի քաղաքականութիւնը զսպանակուած է մէկ գերակշիռ թշնամիի ներկայացուցած մարտահրաւէրներէն։ Այդ թշնամին Իրանն է եւ որմով պայ–մանաւորուած է (ըստ Նեթանիահուի) Իսրայէլի լինելութեան ողջ վարդապետութիւնը։ Այս գաղափարին ուժականութիւններով է նաեւ, որ Նեթանիահուի առաջնորդութեամբ գործող Իսրայէլի ծայրայեղականները կրցած են յաջողապէս «հարազատադրել» (le–gitimize), Արեւմուտքի ուժային ոլորտին մէջ, իրենց ցեղասպանական քաղաքակա–նութիւնը։ Վերջին տարիներուն, այս համակարգը կը գործէր բացառիկ արդիւնա–ւորութեամբ (Իսրայէլի համար) որքան ատեն, որ Ուաշինկթընի մէջ տիրապետող էր նախագահ Պայտընի անջիղ իշխանութիւնը։ Նեթանիահուի ամերիկացի համախոհներն էին, որոնք էապէս կը ճշդէին Ամերիկա–Իրան, Պաղեստինեան եւ առհասարակ Միջին Արեւելեան քաղաքականութիւնը եւ առատաձեռնօրէն կը ֆինանսաւորէին Նեթանի–ահուի արկածախնդրութիւնները։

Թրամփի իշխանութեան գալը շատ բան փոխեց իրերու յիշեալ ընթացքին մէջ։ Նեթանիահու յանկարծ կորսնցուց իր տիրական դիրքերը Ուաշինկթընի մէջ։ Ան դադրեցաւ «տնեցի»ի իրաւունքներ վայելել։ Ան Թրամփի մէջ յանկարծ տեսաւ քա–ղաքական ախոյեան մը, որ ունէր իր ինքնուրոյն տեսլականը տարածաշրջանին համար։ ԻՐ ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ (imperial imperative)՝ ՈՐ ՀԱԿԱ–ՍՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԷՐ ԻՍՐԱՅԷԼԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻՆ ՀԵՏ

Այսպէս է, որ Իրանի հարցը – անխուսափելիօրէյն պիտի դառնար Թրամփ–Նե–թանիահու առճակատման թէժ հնոցը։

Իմ նախորդող յօդուածներով լայնօրէն անդրադարձած եմ, թէ ինչպիսի՞ փուլերէ անցաւ յիշեալ առճակատման քուլիսային հոլովոյթը Թրամփի եւ Նեթանիահուի միջեւ։ Թրամփ եւ Թեհրան ամէն ինչ բրին Ամերիկա–Իրան բանակցային գործընթացը պահելու դրական ընթացքի մէջ՝ ամէն քայլափոխին խոր մտահոգութիւն պատճառելով Նեթան–իահուի establishment–ին, որ ամէն ինչ ըրաւ իր սարդոստայնը հիւսելու բանակցային գործընթացին շուրջ՝ Թրամփի դիրքերը հետեւողականօրէն կարծրացման տանելով եւ գործընթացը հրելով փակուղի։ Նեթանիահուի մարտավարութիւնն էր իրանեան կող–մը մղել ծայրայեղ դիրքերու եւ ի վերջոյ զայն վարկաբեկել, նոյն ատեն տապալելով Թրամփի ռազմավարութիւնը ողջ տարածաշրջանին մէջ։ Պահ մը թուեցաւ, որ Նեթան–իահուի լարած որոգայթները յաջող էին եւ բանակցային գործընթացը արդէն սպառած էր ինքզինք։ Բայց ան ի վերջոյ տեղի չունեցաւ։ Ամերիկա–Իրան երկխօսութիւնը կրկին վերականգնեցաւ եւ կը պատրաստուէր յուսադրիչ նոր հանգրուաններ ձեւաւորելու։

Պարզ է, որ Յունիս 12–13ի Իսրայէլեան հուժկու նախայարձակումը իր շեղբային ճշգրտութեամբ կենսական արժէք կը ներկայացնէր Նեթանիահուի համար։ Ան ուղղ–ուած էր, առաջին հերթին, բանակցային գործընթացին դէմ։ Պէտք էր ականահարել գործընթացը ամէն գնով եւ զայն միանգամընդմիշտ շնչահեղձ ընել։ Ան մանաւանդ ուղղուած էր Թրամփի քաղաքականութեան դէմ եւ – անպայմա՛ն – Թրամփին դէմ անձնապէս։ Ան թիրախաւորեց չարք մը ղեկավար դէմքեր Իրանի պետական ընտրանի–էն, որոնք բանալի դերակատարներ էին Ամերիկա–Իրան բանակցութիւններու բեմին վրայ։ Ան գրկեց Թրամփը իր բանալի խօսակիցներէն։ Ան մանաւանդ վարկաբեկեց Թրամփը – եւ անշուշտ Ամերիկան – տարածաշրջանի ուժերուն աչքին։ Այսօր նախա–գահ Թրամփ եւ Ամերիկա հարցականի տակ են Արաբական թերակղզիի, Սուրիոյ, Իրա–քի, Յորդանանի, Լիբանանի քաղաքական ուժերու աչքին։ Չեմ զարմանար եթէ արար դեկավարութիւնը այսօր ինքզինք գտնէ մեծ յուսախաբուլթեան մը մէջ։ Խաղը նոյն խաղն է, կ’ըսեն անոնք։ Թրամփ մանաւանդ հարցականի տակ է Թուրքիոյ, Ատրպէյճա–նի եւ Ռուսաստանի աչքին։ Ան հարցականի տակ է Ուքրանիայի աչքին։ Չինաստանի եւ Հնդկաստանի աչքին։ Պետական քարտուղար Ռուպիոյի յայտարարութիւնը, ըստ էութեան, ողբերգութիւն մըն է։ Պարտուած ուժի խօսոյթ է ան։ Նախաձեռնութեան պատեհութիւնը կորսնցուցած, Իսրայէլին գիջած գերտէլրութեան մը կաղ չքմեղանքն է, որ անշուշտ պատիւ չի բերէր Ամերիկայի պետութեան եւ ժողովուրդին։ Բա՛ն մը՝ որ ամբողջութեամբ կը հակասէ Թրամփի քաղաքական առաջադրութեանց։

Իսրայէլեան նախայարձակումը նաեւ մեծ հարցեր կը ստեղծէ Թրամփի համար Ամերիկայի ներքին քաղաքականութեան ոլորտին մէջ, ուր Թրամփ արդէն իսկ նստած է քաղաքական աննախընթաց հրաբուխի մը վրայ։ Այս առումով, Նեթանիահուի նախա–ձեռնութիւնը ռազմավարական «հանճար»ի փայլուն օրինակ մը կարելի է համարել, որ նաեւ յղի է դաժան հետեւանքներով աշխարհակարգի ապաղաչին համար։

Գրած եմ բազմիցս, որ Ամերիկա–Իրան բանակցութիւնները միաժամանակ (եւ անմիջականօրէ՛ն) կը պայմանաւորեն իրերու ընթացքը Կովկասի, Հայաստանի եւ յատ–կապէս Միւնիքի ռազմաբեմերուն վրայ։ Անուրանալի է, որ այսօր, Թուրքեւատրպէյ–ճանական սպառնալիքին առջեւ լայնօրէն բացուած է Միւնիքի դռները։ Նեթանիահուի քաղաքականութեան առաջին զոհը Կովկասի մէջ կրնայ դիւրաւ Միւնիքը ըլլալ, եթէ անշուշտ հայկական կողմը յամառի անտեսել ճգնաժամը եւ շարունակէ ապրիլ իր ան–ղեկ կեանքը։ Այսօրուան հիմնական հարցը Թրամփն է։ Խաղաքարտերը լայնօրէն բաց–ուած են Թրամփին (եւ աշխարհակարգին) առջեւ պարտաւորիչ դարձնելով, որ Թրամփ ընէ վճռորոշ ընտրութիւններ։ Արդեօ՞ք Թրամփ պիտի վերցնէ ձեռնոցը եւ պատերազմ յայտարարէ բոլոր Նեթանիահուներուն դէմ։ Եւ ո՞ւր պիտի հաստատուին նորմերը Թրամփի քաղաքականութեան։ Եւ ուրիկէ՞ պիտի սկսի Թրամփի յաջորդ մեկնարկը Խոնչ կարմիր գիծերով պիտի վերսկսի գործել ան։ Պիտի ունենա՞յ իսկական կարմիր գիծեր, թէ թոյլ պիտի տայ, որ Նեթանիահուն ճշդէ կարմիր գիծերը։

Հարցո՛ւմ։ Արդեօք եկա՞ծ է ժամը ինքզինքին եւ ամբողջ աշխարհին հպարտօրէն ցոյց տալու, որ Ամերիկայի նախագահը գիտէ իր մատը դնել իսկական թշնամիին վրայ եւ կրնայ վճռականօրէն կտրել գորդեան հանգոյցը։

ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ

ՀՕՄ–ի 115–ամեայ ազգակերտման առաքելութիւնը անխափան կը շարունակուի

«Դէմքերը լուսավառ՝ գաղափարի փայլով. սրտերը թրթռուն՝ վաղուան երազանքով, միտքը ամուր՝ գործի պատկերով - առաջ անցէ՛ք։ Նոր պատմութիւնը ձեզ կը սպասէ»
Է. Ակնունի

ՀՕՄ–ը ծնունդ առաւ հայ ժողովուրդի տառապանքէն ու վիշտէն։ ՀՕՄ–ին համար մերժելի է նահանջը, որովհետեւ այս կազմակերպութիւնը միշտ հաւատացած է վերելքի, վերածնունդի ու հաւաքական գոյապայքա–րի։ Իր յանձնառութեան կիզակէտը եղած է հայեցի դաստիարակութեան սփռումն ու հայ ընտանիքի բարօրութիւնը։ Տասնամեակներ առաջ ՀՕՄ–ի նշանաբանը եղած է «Փրկէ՛ այսօր, վաղը ուշ է»։. այս նշանախօսքին հաւա–տարմօրէն փարած կը մնայ միութիւնը։

ՀՅԴ Կարմիր Խաչ մկրտուած էր միութիւնը, իր գաղափարական մեծ եղօր՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան որպէս գործակից հայուհինե–րու կազմակերպութիւն։ Գործեց նաեւ Հայ Օգնութեան Խաչ անունով մին–չեւ որ մկրտուեցաւ՝ Հայ Օգնութեան Միութիւն։

Իր խորհրդանշանն իսկ կը պարփակէ ՀՕՄ–ի ողջ էութիւնը․ խաչ, սուր, սիրտ, դափնի, լեռն Արարատ, որոնցմով կը շաղկապուին ընտանիքը, հայրե–նիքը, մշակոյթն ու զթասրտութիւնը։

ՀՕՄ–ի պատմագրութեան մէջ, 20–րդ եւ 21–րդ դարերու ժամանակա–հատուածին, ՀՕՄ–ի բարեսիրական գործադաշտը տարածուեցաւ տարբեր աշխարհաբեւոներու վրայ։

ՀՅԴ Պոլսոյ Ուսանողական Միութեան «Երկունք» 1913 թուականի հայոց գերերու գիւտի 1500–ամեակին նուիրուած յաւելուածին մէջ, ՀՕՄ–ի հիմնադիր էտկար Ակնունին իր յօդուածին մէջ կոչ կ’ուղղէ համայն հայու–թեան, տոգորուն հաւատքով տէր կանգնելու հայ գերին ու մշակոյթին։ Ան գրած է․ «Դէմքերը լուսավառ՝ գաղափարի փայլով, սրտերը թրթռուն՝ վաղ–ուան երազանքով, միտքը ամուր՝ գործի պատկերով – առաջ անցէ՛ք։ Նոր պատմութիւնը ձեզ կը սպասէ»։ Կարծես նահատակ մտաւորական Ակնունիի պատգամը ուղղուած ըլլայ իր հիմնադրած կազմակերպութեան արիասիրտ հայուհիներուն, որոնք Ակնունիի գրած յանձնառութեան հաւատարիմ, տէր կանգնեցան հայ դպրութեան եւ այդ մէկը փաստեցին գործնականօրէն, հայ գաղթաշխարհի գանազան քաղաքներու մէջ հիմնելով դպրոցներ, իսկ ազատագրուած Արցախի մէջ՝ մանկապարտէզներ։

Ամէնէն ուշագրաւն ու կարեւորը սակայն, ՀՕՄ–ը իր բոլոր Սփիւռքի թէ՛ հայրենական նախաձառնութիւններուն համար ունի հաշուետուութիւն եւ այդ մէկը կատարած է կատարեալ ճշգապահութեամբ։ Ժողովուրդէն՝ ժո–ղովուրդին համար ՀՕՄ–ի կարգախօսը ինքնաբացատրական է, թէ ինչո՛ւ իւրաքանչիւր արգասաւոր ծրագրիէ ետք, կազմակերպութիւնը կը ներկա–յացնէ իր հաշուետուութիւնը։

115 տարիներու ՀՕՄ–ի անձուրացութեան վիթխարի գործունէութիւնը կը փաստէ այն մասին, որ 20–րդ դարուն ծնունդ առած նուիրեալ հայու–հիներու այս ասպետութիւնը, արժանի է համայն հայութեան երախտագի–տական զգացումներուն, երախտիք այն վեհանձն խաչուհիներուն, որոնք հաւատացին եւ կը հաւատա՛ն հայութեան արդար դատին։

«Հորիզոն»ի խմբագրական

Ապօրինի... Սկիզբը կարդալ էջ 1

Անկախ գարգացումներէն եւ բռնաճնշումներու ծաւալներէն կը փաստեւք․ որեւէ բռնաճնշում չի կրնար մեզ լռեցնել, այսպիսի գործելաոճը, ի վերջոյ, պիտի ծնի համարժէք հակազդեցութիւն», կը նշէ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի Հանրային կապերու գրասենեակին հրապարակած հաղորդագրութիւնը։

Աւելի ուշ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան «Երկիր»–ին մանրամասնութիւններ ներկայացուց կատարուած ապօրինի բռնաճնշումներէն։ Ան ըսաւ․ «Այս պահուն յայտնի է, որ Հայաստանի տարբեր մարզերուն մէջ՝ Տաւուշ, Կոտայք, նոր պարզուեցաւ նաեւ Լոռի, մեր մար–գային պատասխանատուները բերման կ’ենթարկեն, ձերբակալութեան կը տանին, կը կանչեն քննչական՝ ինչ–որ քննութեան, ներառեալ՝ «Սրբազան պայքար»–ի աշխուժ մասնակիցները։ Սա կը խօսի իշխանութեան վախի մասին, բնականաբար, Թուրքիոյ պահանջները կատարելու պարունակին մէջ այս ամէնը պէտք է դի–տել, բայց այս պահուն կրնամ ըսել, որ եթէ ոեւէ մէկուն միտքով անցնի, որ այս ճանապարհով կրնայ մեզի ետ պահել՝ հայրենիքի համար մեր պայքարէն կամ յոյս ունի, որ ասով կրնայ որեւէ ձեւով ազդել մեր գործողութիւններուն վրայ, չարա–չար կը սխալին։ Այս հալածանքը մեր նկատմամբ նոր չէ, ո’չ առաջինն է, ո’չ ալ վերջինը, մենք որեւէ դիպաշարի պատրաստ ենք», ըսաւ Իշխան Սաղաթէլեանը։

Անդրադառնալով այն դիտարկման, որ քաղաքական հետապնդումներու այս նոր փուլը սկսած է Նիկոլ Փաշինեանի՝ Թուրքիա կատարած այցելութեան զուգա–հեռ, Իշխան Սաղաթէլեան նչեց․ «Այո՛, Թուրքերուն հաճոյանալու համար պէտք է հալածել Դաշնակցութիւնը, եկեղեցին, եւ իր արժէքը Թուրքիոյ մէջ բարձրացնելու պարունակին մէջ սա շատ կարեւոր է Փաշինեանի համար», ըսաւ Իշխան Սաղա–թէլեանը։



Թորոնթոյի «**ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻՉՈՆ**» յատագիրը կարելի է դիտել -

Շաբաթ առաւօտեան ժամը 9:00-10:00
Կիրակի առաւօտեան ժամը 6:00-7:00
Երեքշաբթի կէսօրոայ ժամը 12:00-1:00
Հինգշաբթի երեկոյեան ժամը 10:00-11:00

OMNI 1 կայանէն:

Պատմական Հայաստանի տեսլականը, թէկուզ ոչ այսօր, բայց անպայման օր մը, աշխարհաքաղաքական յարմար պահուն իրականացալի տեսլական է. դոկտ. Գեորգ Յակոբճեան

Ստորեւ որոշ յապաւումով կը ներկայացնեմք դոկտ. Գեորգ Յակոբճեանի բանախօսութիւնը, որ արտասանուած էր Թորոնթոյի մէջ կայացած ՀՀ անկախութեան տօնակատարութեան ընթացքին։

Մայիս 28–ն անգերազանցելի կարեւորութեամբ օժտուած բացառիկ թուական է։ Ամեակներու թիւերը չեն, որոնք պատմական դէպքերուն այժմէական հնչեղութիւն կու տան, այլ նոյնինքն ներկա՛ն ու ներկայի անցու–դարձերը։ Նախ եկէ՛ք վերլիչենք, որ համախմբուած ենք, 1918–էն մեզի փոխանցուած սրբութիւնները՝ եռազոյն դրօշն ու զինանշանը պատուելու, Արամներու, դրօնե–րու, Նժդեհհներու, Քեռիներու, Գէորգ Կաթողիկոսներու անթառամ յիշատակին առջև խոնարհելու, ինչպէս նա–եւ սկիզբէն յստակօրէն ու բարձրաձայն, Սարգարպատի ղօղանչներուն նման բարձր ու զիլ պատգամ փոխանցե–լու ու ո՛չ ըսելու, բոլոր անոնց, որոնք այսօր կը փորձեն մեր ազգային արժէքները, համազգային արժեհամակար–գը խնդրոյ առարկայ դարձնել ու վերասահմանել։ Մէկ–տեղուած ենք վերանորոգելու մեր ուխտը, շարունակելու աւանդը անկախութիւնը գերազոյն նպատակ համարող Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ու բոլոր այն պե–տականամէտ Աղբալեաններուն, Քաջագնունիներուն, Վրացեաններուն, Օհանջանեաններուն եւ անգամ մը եւս հատատելու, որ հայրենիքն ու պետականութիւնը վեր են բոլոր տեսակի շահարկումներէն։

Այսօրուան բանախօսութիւնը հետեւեալ երեք հար–ցադրումներուն յստակ պատախաններ տրամադրելուն վրայ պիտի կեդրոնանայ.

Առաջին. Հայաստանի Ա. Հանրապետութիւնը ի՞նչ ժառանգեց մեր ժողովուրդին, ի՞նչ է Մայիս 28–ի legacy–ն եւ այսօր՝ Մայիս 2025–ին, այդ ժառանգութիգքը ի՞նչ վիճակ կը պարզէ։

«Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը մեր պատմական պատասխանն էր մահուան դատաւճիռին»։ Ամբողջական բնաջնդումի եզրին գտնուող ազգ մը իր միասնական ոգիով, անասան կամքով եւ հերոսական դիմադրութեամբ կրցաւ Հիմնադրել անկախ պետակա–նութիւն մը իր նախնեաց հողին վրայ։

ՊեՏՈՒԹԻՒՆ, Ահա այս է Մայիս 28–ի մեծագոյն ժառանգութիւնը։ Իսկ պետութիւնը կառուցուեցաւ գրե–թէ ոչինչէն։ Իշխանութեան դժուարին պատասխան–տուութիւնը ստանձնած ձՅԴ–ն ու որոշ չափով մնացեալ ուժերը, սկիզբէն, բոլորիվին գերոյէն նորը պիտի ստեղ–ծէին, ինչպէս որ մենք երբեմն Ովկիանոսի այս կողմերը կ’անցնինք ու ամէ՛ն ինչ գերոյէն կը սկսինք, նոյնպէս Հա–յոց Ազգային Խորհրդը, Թիֆլիսէն Երեւան փոխադրուե–ցաւ եւ գրեթէ ամէն ինչ գերոյէն սկսաւ, սակայն երկու յստակ տարբերութիւններով. ա) Երբ ոմանք արեւմտեան այս կողմերը կը փոխադրուին, իրենց անհատական–ըն–տանեկան կեանքը գերոյէն կը սկսին ու միայն յետոյ հա–ւանաբար անցնին համայնքային կեանքի գործունէու–թեան, իսկ 1918–ի ղեկավարութիւնը, ոչ թէ իրենց անհա–տական կեանքերը, այլ պետութիւնը պիտի ստեղծէին ու հասարակութիւնը կազմակերպէին։ Բ) Երբ մարդիկ այս կողմեր կը փոխադրուին, ընդհանրապէս տիրող պայման–ները բարուռք ու հնարաւորթիւնները–առիթները բազ–մաթիւ, բազմատեսակ են, իսկ այդ օրերուն, Հայաստանի մէջ տիրող պայմանները ո՛չ թէ բարօր, այլ գերժանր էին, աւերակներու վրայ պետութիւն պէտք է կառուցէր։

Յեղասպանութեան պատճառաւ տարագրեալ գաղթականներ, համատարած հիւանդութիւններ, թրքա–կան յարձակումներ ու թալան, քանդուած ու աւերուած գիւղեր, դադրած գիւղատնտեսութիւն, բառին ամբող–ջական իմաստով սով։ Աւելի պարզ՝ կատարեալ քաոս եւ անիշխանութիւն։ Ամէն բան պէտք էր սկիզբէն սկսիլ։

Հակառակ իր հիմնադրութեան օրերու ծանր ու ճգնաժամային այս պայմաններուն, նորաիթիթ պետու–թիւնը կրցաւ կարճ ժամանակի մէջ հսկայական գործ կա–տարել։ Կազմակերպուեցաւ պետական համակարգ ու հա–յոց բանակ, քանի մը ամսուան ընթացքին պետութեան սահմանները ընդարձակուեցան, հաստատուեցան դիւա–նագիտական կապեր ու ղեսպանատուներ, պատմութեան առաջին կին ղեսպանը նշանակուեցաւ, խորհրդարանա–կան ժողովրդավար ընտրութիւններ տեղի ունեցան, ու ազգային փոքրամասնութիւններ ներառող խորհրդարա–նին մէջ նաեւ երեք կիներ պատգամաւոր դարձան, 400–ի հասնող օրէնքներ որդեգրուեցան, հայկական դրամանիշ ու անձնագրեր տպուեցան, Երեւանի Պետական Համալր–սարան ու կրթական, գիտական եւ բարեսիրական հաս–տատութիւններ հիմնուեցան, գիւղատնտեսութիւնը վե–րաշխուժացաւ, ճանապարհային հաղորդակցութիւնն ու երկաթուղիները բարելաւուեցան։ Աւելին, 1919–ին Երե–ւանի մէջ «Միացեալ եւ Անկախ Հայաստան»ի ծրագի–րը յայտարարուեցաւ՝ ձեւակերպելով Հայ Դատի քաղա–քական նպատակը, իսկ 1920–ի Սեւրի դաշնագիրով Հա–յաստանը հանդէս եկաւ որպէս անկախ, միջազգայնօրէն ճանչցուած պետութիւն եւ միջազգային օրէնքի սուպլե–եկտ (subject) եւ ոչ օպլեեկտ (object)։

Այս բոլորը կը հաստատեն, թէ հայ ժողովուրդը կրնայ վերածնիլ նոյնիսկ կործանումի եզրէն։ Եթէ 1918–ին մեր ժողովուրդը այդ կամքն ու վճռակամութիւնը ունե–ցաւ մահուան եզրէն ու գրեթէ ոչինչէն պետութիւն կեր–տելու, այսօր եւս, հակառակ բոլոր խնչընդոտներուն, կա–րելի է յաղթահարել բոլոր տեսակի մարտահրաւէրներն ու դժուարութիւնները։

Այո՛, Մայիս 28–ի յաղթանակները չլուծեցին հայոց բոլոր հարցերը, բայց վերականգնեցին հաւատը, ոգին եւ պետական միտք–մտածողութիւնը։ Այդ օրերուն ոչ միայն կանոնաւոր բանակը, այլ ողջ ժողովուրդը՝ կին ու տղա–մարդ, արեւելեահայ ու արեւմտահայ (ներառեալ Արցա–խէն ժամանած հեծելազօրը) փշրեց յուսահատութեան կա–պանքները եւ միասնական ջանքերով կասեցուց աղէտը։ Այս դրոյթը, այս ոգին մեր ժողովուրդին կողմէ ցուցաբեր–ուած միահամուռ դիմադրութեամբ, կերտեց անկախու–թիւն մը, որ այսօր եւս պէտք է ներշնչէ մեզ։

Այսօր ի՞նչ վիճակի մէջ է այս ժառանգութիւնը։

Վերջին տարիներուն յաճախ կ’արտայայտուինք, որ մեր պատմութիւնը ինքզինք կը կրկնէ։ Իսկ կրնա՞յ ըլ–լալ որ անցեալի դաժան դէպքերը գրեթէ նոյնութեամբ կը կրկնուին, որովհետեւ ինչ որ տեղ մը մոռցած ենք կամ անտեսած ենք պատմութեան դասերը։ Պատմութիւնը անցեալի զուտ ժամանակագրական նկարագրութիւն չէ, այն կենդանի եւ յարափոփոխ գիտութիւն է ներկայի ըմբռնման համար։

Հայոց Յեղասպանութեան 110–րդ տարելիցի նա–խաշնմին փաշինեանական յայտարարութիւնը կ’ըսէր, թէ «անցեալին մէջ մնալը շատ հեշտ» մոլորութիւն է եւ ճիշ–դը՝ դէպի ապագայ նային է։ Սոյն մօտեցումը մէկ բան կը նպատակադէ՛ տարանջատել եւ հակադրել Պատ–մական եւ Իրական Հայաստանը, Հայրենիքն ու Պետու–թիւնը, Ազգայինն ու Պետկանը, Հայաստանն ու Սփիւռ–քը, Արարատն ու Արագածը, Արցախն ու Հայաստանը։ Անցեալը անցեալին մէջ ձգելու ջատագովները սակայն, իրենք անցեալը հանգիստ չեն ձգեր եւ անդրդուելիօրէն կը ձգտին մեր հաւաքական յիշողութիւնն ու աշխար–հընկալումը վերասահմանել, փոխել։ Այդ կը փորձեն ընել արդարացինքն ու համար այն իրականութիւնը, որ այսօր մեր անկախութիւնն ու ինքնիշխանութիւնը խոցուած է, ազերին տարածքներ բռնազրաւած է Հայաստանի միջադ–գայնօրէն ճանչցուած տարածքներէն, ու ներքին պառակ–տումները բեւեռացուցած են մեզ։

Հայ սփիւռքը, այսօր ամէն ժամանակէ աւելի, պէտք է վերազրաւէ իր արժանի տեղը՝ որպէս ռազմավարական միջոց ու յենարան Հայաստանի պետութիւնն ու պետա–կանութիւնը ամրագրելու։ Այդ կը նշանակէ համակարգ–ուած ձեւով ներդրում կատարել հայ ժողովուրդի իրա–ւունքներու պաշտպանութեան եւ հետապնդման մէջ, ո՛չ միայն նիւթապէս, այլ նաեւ մտաւորական, դիւանագի–տական, տնտեսական, առեւտրական եւ քաղաքական մակարդակներով։ Կը նշանակէ անդրդուելի մնալ այն գաղափարախօսութիւններուն եւ հոսանքներուն դի–մաց, որոնք կը փորձեն Սփիւռքը անջատել հայրենիքէն, սփիւռքեան օրակարգը միայն նեղ համայնքային պէտ–քերու եւ աշխատանքներու վրայ կեդրոնացնել, հաշտուիլ Արցախի կորուստին հետ ու բնականացնել պարտութիւնը։

Այսօր կոչուած ենք Սփիւռքի երիտասարդութիւնը յիշողութիւնէն անդին առաքելութեամբ մը զինելու. այդ առաքելութիւնը Հայաստանի ու հայ մարդու անվտան–գութիւնն ու բարօրութիւնը ապահովելն ու երաշխաւորելն է, իրաւաքանչիւրը իր ոլորտին մէջ։

Երկրորդ. Ինչպէ՞ս կը մեկնաբանուի Մայիս 28–ն այսօր, ու որո՞նք են այն յստակ տարբերութիւնները 1918–ի իշխանութիւններուն եւ Հայաստանի ներկայ իշխանու–թիւններուն միջեւ։ Արդեօք ճիշդ ու արդար են ՔՊ–ական այն մեկնաբանութիւնները, թէ 1918–ին ընդամէնը Հայոց Յեղասպանութենէն երեք տարիներ ետք ձՅԴ–ն եւս կը բանակցէր, կը համագործակցէր թուրքերուն եւ թաթար–ներուն հետ, խաղաղութեան պայմանագրեր կը կնքէր ու դիւանագիտական յարաբերութիւններ կը հաստատէր։

Իսկապէս անդրնդունելի է 1918–ի Առաջին Հանրա–պետութեան ղեկավարներուն քայլերը նմանցնել այսօր–ուան իշխանութիւններու ընտրած գործընթացներուն՝ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի հետ յարաբերութիւններու շրջանակին մէջ։ Նախ պէտք է սխալ արտայայտութենէ մը սկսիլ. «1918–ին, ընդամէնը Յեղասպանութենէն երեք տարի ետք» կ’ըսեն, առանց գիտակցելու որ Յեղասպա–նութիւնը 1915–ին չաւարտեցաւ, այլ անոր տարբեր դրսե–ւորումները շարունակուեցան մինչեւ 1923 թուական։ Այսինքն, խորքին մէջ նորաստեղծ պետութեան ռազմա–քաղաքկան ղեկավարութիւնը դեռ կը գործէր ցեղաս–պանական ընթացող յանցագործութեան եւ բնաջնջուե–լու հաւանականութեան պայմաններուն տակ։ Թրքական ռազմական ուժերը հայկական տարածքներուն վրան կը վիստային։ 1918–ի ղեկավարները բանակցութիւններ կը վարէին առանց կանոնաւոր ու հզօր բանակի, առանց դաշնակիցներու, առանց դիւանագիտական յարաբերու–



թիւններու, Հայաստանը որպէս անկախ պետութիւն չէր ճանչցուած, առանց սփիւռքի, առանց պետական հաստա–տութիւններու, նոյնիսկ առանց սնունդի, դեղորայքի կամ վառելանիւթի։ Անոնք կը բանակցէին ազգին ու նորածին պետութեան գոյատեւումը ապահովելու եւ ոչ թէ խաղա–ղութիւն մուրալու։ Դաշնագրերու, ինչպէս Պաթումի սոտ–րագրումը անխուսափելի էր ու ստիպողական։

Այս բանակցութիւնները գոյատեւման միջոցներ էին, ոչ թէ լուկ հաշտեցման ու յարաբերութիւններու բնա–կանոնացման։ Միւս կողմէ, Հայաստանի այդ օրերու դե–կավարութիւնը հրապարակաւ կը դատապարտէր թրքա–կան ցեղասպան քաղաքականութիւնը, կասկածանքի տակ չէին դներ ջարդերուն պատճառները, victim blaming չէին ըներ, իրենց գերիշխանութեան տակ եղող ժողովուրդին պաշտպանութենէն չէին հրաժարեր, փախստականներու եւ որբերու հարցերով կը զբաղէին, վկայութիւններ կը հա–ւաքէին, արխիւներ կը պահպանէին ու ազգային յատակ պահանջատիրութեամբ Փարիզի խաղաղութեան Համաժո–ղովին պետական պաշտօնական պատուիրակութիւն կ’ու–ղարկէին ու «Սեւը» կ’ապահովէին։ Վերջապէս, թէեւ այդ օրերու ղեկավարութիւնը կը բանակցէր ու փաստացի (De facto), ո՛չ իրաւական ու ոչ վաւերական պայմանագրեր կը կնքէր, միւս կողմէ կեանքի կը կոչէր Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանի տեսլականը ու մանաւա՛նդ կը ծրագրէր ու կը գործադրէր Նեմեսիսի գործողութիւնը…։

Եկէ՛ք այս բոլոր պատմական իրողութիւնները այսօրուան կամ 2020–ի կամ 2023–ի Հայաստանի Հան–րապետութեան պայմաններուն եւ անոր ղեկավարութեան վարքագծին հետ բաղդատենք։ Հայաստանը պետութիւն է, ունի միջազգային ճանաչում, միջպետական ռազմա–վարական դաշինքներ, դիւանագիտական միջոցներ, աշխարհատարած սփիւռք եւ սփիւռքեան աջակցութիւն, անդամ է բազմաթիւ միջազգային կազմակերպութիւն–ներու, ինչպէս նաեւ միջազգային ու տարածաշրջանային իրաւական, դատական եւ քաղաքական գործիքակազ–մերու. ունի համաշխարհային համբաւ վայելող գիտնա–կաններ ու ձեռնարկատէրեր, աշխոյժ քաղաքացիական հաստակութիւն եւ համակարգումի սպասող անպարտե–լի ներուժ։ Աւելին՝ ունի կամ 2020–ին ունէ՞ր գրեթէ 30 տարի լաւ թէ վատ պայմաններու մէջ գոյացած բանակ ու զինամթերք, պետական հաստատութիւններ եւ լծակ–ներ։ Բայց ներկայ իշխանութիւնները գիտակցաբար ու գիտաւորեալ որդեգրած են յանձնատուութեան, պատ–մական իրողութիւններու ժխտման, Հայոց Յեղասպա–նութեան ուրացման, թրքական թեզերու սպասարկման՝ Արցախէն, արցախահայութեան տարրական իրաւունքնե–րէն ու համազգային պահանջատիրութենէն հրաժարման եւ յանուն իշխանութեան, առանց որեւէ անվտանգային երաշխիքի, թշնամիներուն հետ բնականոնացման քաղա–քականութիւն, աւելի ճիշդ՝ Հայաստանի թրքացման քա–ղաքականութիւն, առանց որեւէ պատասխանատուութիւն ստանձնելու Արցախի ցեղասպանական ողբերգութեան ու արցախահայութեան հայրենազրկման, ՀՀ տարածքներու եւ ինքիշխանութեան խոցուած վիճակին ու օրէ օր խորա–ցող բազմաթիւ այլ խնդիրներու։ Հետեւաբար, այսօրուան իշխանութիւններուն ապագգային գործունէութիւնը 1918–ի արդարամիտ, ազգօգուտ եւ պետականամէտ իշխանու–թիւններու գործունէութեան հետ համեմատելը՝ պարզա–պէս պատմութեան նենգ ու մոլորեցնող, խեղաթիւրող չարաշահում մըն է այս օրերու ապագգային գործունէու–թիւնն ու անդառնալի ձախողութիւնները արդարացնելու։

Երրորդ. Մայիս 28–ի խորհուրդին վրայ հիմնուած, ինչպէ՞ս կարելի է մերկացնել ու դատապարտել այն գաղափարախօսութիւնն ու խօսույթը, զորս այսօրուան իշխանութիւնները կը փորձեն նենգաբար ներկայացնել որպէս հիմնական արժէքներ այսպէս կոչուած «խաղաղու–թեան օրակարգ», «Հայրենիքը Պետութիւնն է» եւ «Իրա–կան Հայաստան» յորջորջումներով։

«Խաղաղութեան Խոչմերուկ», «Խաղաղութեան Օրակարգ» հայեցակարգերով ներկայ իշխանութիւնները ոչ թէ բարօրութեան ու կայուն խաղաղութեան կ’առաջ

Canada



Bonne Fête du Canada

DE LA PART DE VOS DÉPUTÉS FÉDÉRAUX LIBÉRAUX

Happy Canada Day

FROM YOUR FEDERAL LIBERAL MPs



ANJU DHILLON

DÉPUTÉE / MP
Dorval – Lachine – LaSalle
Anju.Dhillon@parl.gc.ca
(514) 639-4497



FAYÇAL EL-KHOURY

DÉPUTÉ / MP
Laval – Les Îles
Faycal.El-Khoury@parl.gc.ca
(450) 689-4594



HON. STEVEN GUILBEAULT

DÉPUTÉ / MP
Laurier – Sainte-Marie
Steven.Guilbeault@parl.gc.ca
(514) 522-1339



ANTHONY HOUSEFATHER

DÉPUTÉ / MP
Mont-Royal / Mount Royal
Anthony.Housefather@parl.gc.ca
(514) 283-0171



HON. MÉLANIE JOLY

DÉPUTÉE / MP
Ahuntsic-Cartierville
Melanie.Joly@parl.gc.ca
(514) 383-3709



NATILIEN JOSEPH

DÉPUTÉ / MP
Longueuil – Saint-Hubert
Natilien.Joseph@parl.gc.ca
(450) 928-4778



ANNIE KOUTRAKIS

DÉPUTÉE / MP
Vimy
Annie.Koutrakis@parl.gc.ca
(450) 973-5660



EMMANUELLA LAMBROPOULOS

DÉPUTÉE / MP
Saint-Laurent
Emmanuella.Lambropoulos@parl.gc.ca
(514) 335-6655



PATRICIA LATTANZIO

DÉPUTÉE / MP
Saint-Léonard – Saint-Michel
Patricia.Lattanzio@parl.gc.ca
(514) 256-4548



CARLOS LEITÃO

DÉPUTÉ / MP
Marc-Aurèle-Fortin
Carlos.Leitao@parl.gc.ca
(450) 622-8858



MARIE-GABRIELLE MENARD

DÉPUTÉE / MP
Hochelaga – Rosemont-Est
Marie.Gabrielle.Menard@parl.gc.ca
(514) 201-8608



BIENVENU-OLIVIER NTUMBA

DÉPUTÉ / MP
Mont-Saint-Bruno – L'Acadie
Bienvenu-Olivier.Ntumba@parl.gc.ca
(450) 922-7900



ABDELHAQ SARI

DÉPUTÉ / MP
Bourassa
Abdelhaq.Sari@parl.gc.ca
(514) 323-0980



ERIC ST-PIERRE

DÉPUTÉ / MP
Honoré-Mercier
Eric.St-Pierre@parl.gc.ca
(514) 353-5882



SAMEER ZUBERI

DÉPUTÉ / MP
Pierrefonds – Dollard
Sameer.Zuberi@parl.gc.ca
(514) 624-5725

ANI BAKERY LTD

Middle Eastern Pizza Lahmajoun

Սեփականատեր՝ Արսեն Տապապաղեան

Ուր կը գտնէք հայկական եւ արաբական լահմաճունի տեսակներ՝ փոքր եւ բնական չափերով: Լահմաճունը կը պատրաստենք մեր չափերով եւ յաճախորդներուն պահանջին համաձայն՝ միսը իրենցմէ կամ մեզմէ: Կը պատրաստենք եւ կը ծախենք նաեւ թահինով հաց, պանիրով հաց եւ մենէիշ: Միշտ պատրաստ ենք ձեր ապսպրանքներուն գոհացում տալու ուրախ եւ տխուր առիթներով:

Address: 25 Howden Road, Unit #2, Scarborough, Ontario M1R 3C3 | Phone: (416) 285-7164

Բաց ենք շաբաթը վեց օր, կիրակի մինչեւ կէսօրէ ետք՝ ժամը 2:00 (Երկուշաբթի փակ)

Փորձեցէք եւ
գոհ պիտի մնաք



HYBRID. POWERFUL. LUXURIOUS.
2025 NX 350H

LEXUS
EXPERIENCE AMAZING



Image shown for illustration only.

LEXUS | LEXUS GABRIEL ST-LAURENT

3303, ch. de la Côte-de-Liesse, Saint-Laurent, QC H4N 3C2
514 747-7777, lexusgabrielstlaurent.ca

Starting from \$59,785*

* Vehicle price reflects Manufacturer's Suggested Retail Price (MSRP) in Canadian dollars and includes delivery and destination charge of \$2,205.00, A/C charge of \$100.00, tire levy of \$22.50 and, if leased or financed - applicable RDPRM fee of up to \$49.40 and PPSA service fee of up to \$4.00 (varies by lease/loan/term/province), the luxury surcharge (if, and where applicable) that your selling dealer may apply to the final negotiated vehicle price, and dealer fees of up to \$695.00. GST, QST, insurance, and license are not included. Conditions apply. Contact Lexus Gabriel St-Laurent for more information.



Հովանաւորութեամբ
Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեանի
Առաջնորդ
Գանատայի Հայոց Թեմի

Ազգային Առաջնորդարանի
նոր Հրատարակութիւններու

ՇՆՈՐՀԱՆԴԷՍ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒ
ՄԵԿԵՆԱՍ՝ ՏԻԿԻՆ ՇԱՔԷ ԿԷՕՆՃԵԱՆ

Տեղի պիտի ունենայ՝
Հինգշաբթի, 3 Յուլիս 2025
Երեկոյեան ժամը 7:30-ին
Ահարոնեան Սրահ, Մոնթրէալ

Crown Pastries

حلويات، لتاج

Fine Middle Eastern Pastries

SCARBOROUGH

1279 Kennedy Rd,
Scarborough, Ontario
(416) 615-7000

SCARBOROUGH

2086 Lawrence Ave. E,
Scarborough, Ontario
(647) 351-2015

MISSISSAUGA

5083 Dixie Rd, Unit D3,
Mississauga, Ontario
(905) 602-2018

OAKVILLE

407 Iroquois Shore Rd,
Oakville, Ontario
(905) 339-2021

LONDON

655 Wellington Rd, #2
London, Ontario
(519) 686-8000

VAUGHN

3175 Rutherford Rd
Building K, Unit 64
Vaughn, Ontario
(905) 660-8006

Crownpastries.com



Հորիզոն

www.horizonweekly.ca



MAISON Des Noces

Pierre Halteh
(514) 910 - 0833
(450) 682 - 0059

710 Bd. Curé-Labelle, Chomedey
Laval, QC. H7V 2T9

Kevin Asadourian

General Manager
Directeur général
Kevin@gabriel.ca

AUTOMOBILE
GABRIEL
EST

7177 Boulevard Henri-Bourassa E, Montreal, QC H1E 7L8
T. : 514 218-7777
www.automobilegabriel.com

Automobile Gabriel Est

HONDA

HONDA GABRIEL

7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, QC H1G 6C4
www.hondagabriel.com

Tro Bachekjian
Représentant des ventes
Véhicules d'occasion
Pre-owned
Sales Consultant
tbachekjian@gabriel.ca
Tél. : 514 327-7777
Poste : 4139
Téléc. : 514 262-8019

CONCESSIONNAIRE
DE QUALITÉ

ALYA
BIJOUTERIE
JEWELLERY

(514) 995-6555
ayla.jewellery@hotmail.com

3678 Boulevard Saint-Martin O,
Laval, QC H7T 1A8

X-LINE LOGISITCS

24/7 delivery services for seamless and secure
shipments between Canada and the USA

Special Events, Trade Shows, Inside Delivery,
Same Day Delivery, White Glove Services, Warehousing

Operation Manager Raffi Sevan

Tel: 514-968-3281, 514-554-8039, Email: dispatch@x-line.ca
Montreal: 4425 Boul. Poirier, St-Laurent, Qc, H4R 2A4
Toronto: 1149 Kennedy Road, Scarborough, On, M1P 2K8

ASSEMBLÉE NATIONALE DU QUÉBEC

SONA LAKHOYAN OLIVIER
DÉPUTÉE DE / MNA FOR
CHOMEDÉY
Sona.LakhoyanOlivier.CHOM@assnat.qc.ca
450-686-0166

Serge Keuroghlian
Courtier immobilier
514-892-5649
skeuroghlian@sutton.com

Sutton
groupe sutton - excellence inc.
Agence immobilière
1555, boul. de l'Avenir bureau 100
Laval (Québec) H7S 0N5
B 450-662-3036
www.sergekeuroghlian.com

KRIKOR MAROUNIAN RLU

Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • RRSP/TFSA/RESP
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6

Res: (514) 332-7021
Fax: (514) 731-7499
Cell: (514) 927-2666

krikormar@gmail.com

Pâtisserie Samadi et fils

Tél.: 514.315.9572
1 5995, boul. Gouin Ouest, #102
Montréal, QC. H4J 2P8
www.patisseriesamadi.ca / zakaria@patisseriesamadi.ca

Tél.: 514.507.9573
2 595, boul. de la Côte-Vertu
St-Laurent, QC. H4L 1X8

Between ceasefire and uncertainty: Voices from Iran

A fragile ceasefire looms over Iran and Israel, brokered in a dramatic late-night push by U.S. President Donald Trump with Qatari mediation, ending 12 days of airstrikes, missile barrages and civilian terror. While diplomats debate the future of the region, ordinary Iranian-Armenians and Persians alike are left to pick up the pieces, their lives upended by a war that, for many, has changed everything.

The announcement came swiftly: a “complete and total” ceasefire, with both sides agreeing to halt attacks after a final window to complete ongoing operations. For many in Tehran, the news brought a mix of relief and disbelief.

“People still don’t believe the ceasefire will hold,” said Armine*, a 48-year-old Iranian-Armenian from Tehran, in an interview with the Armenian Weekly. With internet access in the city severely disrupted, she’s been relying on patchy calls and fragmented messages to stay connected. She remains in Tehran with her son and elderly parents. “They think it will take at least a week before life returns to normal.”

Armine’s family depends on her small handmade crafts business for income, but for nearly two weeks, shops have been shuttered and daily routines completely disrupted.

Armine’s story is typical of many in Tehran’s Armenian community — a minority with deep roots in the city. The Iranian-Armenian community is one of the oldest Armenian diasporas, with a long history of preserving its language, culture and traditions despite being a minority. Mostly concentrated in Tehran and a few other cities, many maintain strong ties to Armenia, their ancestral homeland.

She describes a city transformed: “They targeted military sites, but civilians suffered too. They hit police stations, government offices, prisons, but mostly barracks and infrastructure.

Moscow says Yerevan’s EU aspirations already damaging Armenia’s economy

MOSCOW — Russia said that Yerevan’s aspirations to join the European Union have already caused damage to Armenia’s economy and warned of a more bleak economic outlook if the process moves forward.

Russian Deputy Prime Minister Alexei Overchuk said in an interview with “Vedomosti” published on June 20 that Armenia’s move toward the EU has created scepticism about Rus-

sians were desperate, afraid. They only bought food and medicine — nothing else.” Even as the bombs fell, she couldn’t risk moving her elderly parents the long way to Armenia, forced instead to wait out the violence in the capital.

During the war, many residents fled Tehran for safer cities that were not under bombardment. Thousands crossed the country’s land borders, with some making their way to Armenia.

Now, even after the ceasefire, the city remains tense. “Some people have returned to Tehran, but most shops remain closed. There are checkpoints between the major streets. People are glad the war is over, but sad too — the regime hasn’t changed.”

“Many hoped this would be the end, but it wasn’t,” she added.

At Armenia’s Agarak border crossing, the impact of war is etched on every face: families with foreign passports, young mothers with infants and students — many with plans to continue onward to Germany, Canada, Australia and other destinations.

Amir, a 42-year-old Iranian-Australian, had traveled to Tehran for his mother’s birthday when the war erupted. After a week under bombardment, he left for Armenia — his mother choosing instead to relocate to a safer city in Iran. “Iranians have seen worse wars; they will endure,” Amir told the Weekly, while trying to explain his mother’s decision. “No one wants their country bombed — not by Israel or the U.S.. Iranians don’t want foreign intervention in their internal affairs.”

Among those who crossed into Armenia was Aramazd Vardanyan, a 58-year-old jeweler who arrived via the Meghri land border to join his daughter, a student in Yerevan. His decision was driven by a mix of concern, hope and uncertainty as

Continued on page E2

sian companies doing business with Armenia.

Overchuk, who has warned about Armenia’s aspirations before, said that Armenia’s membership in the Russia-led Eurasian Economic Union has significantly impacted Armenia’s economic growth. He pointed out that while trade with EEU countries has reached \$12.7 bil-

Continued on page E2

Azerbaijan maliciously misleads the Organization of Islamic Cooperation

STATEMENT BY THE ARMENIAN NATIONAL COMMITTEE-INTERNATIONAL

During the regular session of the Organization of Islamic Cooperation (OIC) Council of Foreign Ministers held in Istanbul on June 21-22, 2025, a declaration was adopted, parts of which — along with separate resolutions — concerning Armenia and the region are misleading, unacceptable, and deeply concerning.

Specifically, historical and political events, as well as ongoing processes in the region, are represented in a highly distorted manner. Alongside phrases like “Western Azerbaijan” or “present-day Armenia,” official Baku’s state propaganda machine has pushed forward false claims, including demands related to the so-called “forced and systematic displacement” of Azerbaijanis and their right to return, the destruction of Islamic cultural heritage, and so on. Armenia is criticized for not engaging in dialogue with organizations representing the “Western Azerbaijan” community. Moreover, Armenia is presented with the demand to satisfy Azerbaijan’s illegal and fabricated demands in exchange for signing a peace agreement.

The Armenian National Committee-International strongly condemns the Istanbul statement and the individual resolutions of the Islamic Cooperation Organization’s Council of Foreign Ministers, which aim to present the Karabagh-Azerbaijan conflict in a one-sided manner and distort the essence of the Nagorno-Karabagh issue. It is necessary to state that the origin of the Nagorno-Karabagh conflict was conditioned by Azerbaijan’s aggression against the exercise of the right to self-determination of Nagorno-Karabagh.

Unfortunately, this organization, which speaks on behalf of the entire Islamic world, has once again yielded to Azerbaijan’s fabricated demands and is creating a dangerous situation that could threaten peaceful coexistence between Christian and Muslim populations in both the South Caucasus and neighboring regions. The use of this major organization by Azerbaijan to ignite inter-religious conflicts

must be rejected by Islamic countries.

It is also highly strange that, while the Islamic Cooperation Organization’s Council of Foreign Ministers condemns Israeli criminal policies in the Middle East, it has simultaneously failed to address the actions of Azerbaijan, a key strategic ally of Israel in the region, which contradict the very goals of the organization and the political positions of its key member states.

A glaring example of political hypocrisy and one-sidedness is the repetition of Azerbaijan’s fabricated demands, while conveniently ignoring the fact of Azerbaijan’s occupation of the Republic of Armenia’s territories, its genocidal policies leading to the ethnic cleansing of Nagorno-Karabagh, the need for the realization of the right of return for Armenians from Artsakh (Nagorno-Karabagh), the release of prisoners of war, the systematic and deliberate destruction and/or expropriation of the cultural identity of Artsakh’s Armenian cultural heritage, and other actions by Azerbaijan aimed at disrupting peace in the region.

